ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
ք. Մարալիկ, Մադաթյան փ. 1, հեռ. 0242- 2-22-37, ani.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 123-Ա

<<25>> սեպտեմբերի 2025 թվականի քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԵՐԻ, ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԵՐԻ ԿԵՍԻՑ ԱՎԵԼԻՒՆ ԱՆՀԱՐԳԵԼԻ ՊԱՏՃԱՌՈՎ ԲԱՑԱԿԱՅԱԾ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 12-Ի N 91-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի, 70-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթներով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 37-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով և հաշվի առնելով, որ <<ԱԶԳ-ՀԱՄԱՅՆՔ>> կուսակցությունների դաշինքի Անի համայնքի ավագանու թվով 5 /հինգ/ <<ԻՄ ՀԶՈՐ ՀԱՄԱՅՆՔ>> կուսակցության Անի համայնքի ավագանու 1 /մեկ/ անդամները ավագանու առաջին նստաշրջանի ընթացքում անհարգելի պատճառով բացակայել են ավագանու բոլոր 6 նիստերից, քվեարկությունների և հանձնաժողովի նիստերից.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է՝

1. Վաղաժամկետ դադարեցնել <<ԱԶԳ-ՀԱՄԱՅՆՔ>> կուսակցությունների դաշինքի և <<ԻՄ ՀԶՈՐ ՀԱՄԱՅՆՔ>> կուսակցության Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու հետևյալ անդամների լիազորությունները՝

1) <<ԱԶԳ-ՀԱՄԱՅՆՔ>> կուսակցությունների դաշինքի ավագանու անդամներ՝

ՎԵՐԳԻՆԵ ՍՈՒՐԻԿԻ ԿՆՅԱԶՅԱՆԻ,

ԱՎԵՏԻՔ ՎԱՉԵՅԻ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ,

ՍԱՄՎԵԼ ՎԱՀԱԳԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ,

ԼՈՒՍԻՆԵ ԱՇՈՏԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ,

ՄԵԼՍ ԳՈՒՐԳԵՆԻ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ:

<<ԻՄ ՀԶՈՐ ՀԱՄԱՅՆՔ>> կուսակցության համայնքի ավագանու անդամ՝

ԱՐՄԵՆ ԱԼԲԵՐՏԻ ԲՈՋԻԿՅԱՆԻ:

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար Ա. Սարիբեկյանին.

Սույն որոշումը յոթ աշխատանքային օրվա ժամկետում ուղարկել թիվ 33 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին:

3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2025 թվականի սեպտեմբերի 12-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու առաջին նստաշրջանի ընթացքում ավագանու նիստերի, քվեարկությունների և հանձնաժողովի նիստերի կեսից ավելիին անհարգելի պատճառով բացակայած ավագանու անդամների լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին>> N 91-Ա որոշումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

	Կողմ՝ 12	**դեմ՝ 0**	**ձեռնպահ՝0**
Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ	----------	----------	----------
Է. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ	----------	----------	----------
Ռ. ԱՐՇԱԿՅԱՆ	----------	----------	----------
Է. ՈՒՌՈՒՏՅԱՆ	----------	----------	----------
Ա. ՇԱԲՈՅԱՆ	----------	----------	----------
Հ. ՋԱՏԻԿՅԱՆ	----------	----------	----------
Ժ. ԱԼԵՔՅԱՆ	----------	----------	----------
Գ. ԹԱԹԵՎՈՍՅԱՆ	----------	----------	----------
Մ. ԵՆՈՔՅԱՆ	----------	----------	----------
Գ. ՀԱԿՈԲՅԱՆ	----------	----------	----------
Գ. ՊՈՂՈՍՅԱՆ	----------	----------	----------
Մ. ԱՍԼԱՆՅԱՆ	----------	----------	----------

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ**

<<25>> սեպտեմբերի 2025 թ.
քաղաք Մարալիկ